

ՀԱՅ- ՌՈՒՍԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ

ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԲԱԶՈՅԱՆ ԵՂԻՇԵ ԻՇԽԱՆԻ

ՊԱՌԼԱՄԵՆՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԺԲ.00.02-Հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, ֆինանսական,
մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում)
մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ ---- 2025

АРМЯНО- РОССИЙСКИЙ УНИВЕРСИТЕТ

ЕГИШЕ БАЗОЯН ИШХАНОВИЧ

СУЩНОСТЬ ПАРЛАМЕНТСКОГО КОНТРОЛЯ И СОВРЕМЕННЫЕ ПРОБЛЕМЫ В
РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

АФТОРЕФЕРАТ

Диссертации на соискание ученой степени кандидата юридический наук по
специальности 12.00.02 –Публичное право (конституционное, административное,
финансовое, муниципальное, экологическое, европейское право, государственное
управление)

ЕРЕВАН -----2025

Ատենախոսության թեման հաստատվել է Հայ -Ռուսական համալսարանում

Գիտական ղեկավար՝

Իրավաբանական գիտությունների դոկտոր
պրոֆեսոր Ժորա Դանիելի Զհանգիրյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝


Աշոտ Հայկի Խաչատրյան, իրավ. գիտ. դոկտոր
Սամվել Կնյազի Առաքելյան, իրավ. գիտ թեկնածու

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ակադեմիա

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2025թ.-ի նոյեմբերի 15-ին ժամը 11:00-ին:

Հայ-Ռուսական համալսարանում գործող ՀՀ ԲԿԳԿ իրավաբանական խորհրդի 063 մասնագիտական խորհրդի նիստում (0051, ք. Երևան Հ. Էմին 123) Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայ-Ռուսական համալսարանի գիտական աշխատողների գրադարանում:

Սեղմագիրն առաքվել է 2025թ.-ի հոկտեմբերի 14-ին
Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար

Իրավաբանական գիտությունների թեկնածու  Զ. Շ. Հաչատրյան

Тема диссертации утверждена в Российско-Армянском университете

Научный руководитель:

доктор юридических наук
Профессор Жора Даниелович Джангирян

Официальные оппоненты:

доктор юридических наук
А. А. Хачатрян
кандидат юридических наук
С. К. Аракелян

Ведущая организация:

Академия учебного комплекса МВД РА


Защита диссертации состоится 15-ого ноября 2025 года, в 11:00 часов на заседании специализированного совета КВОН РА 063 по юриспруденции при Армяно-Российском университете. (г. Ереван, 0051, Овсепя Эмина 123)

С диссертацией можно ознакомиться в читательном зале научных работников библиотеки Армяно-Российского университета .

Автореферат разослан 14 октября 2025 г.

Ученый секретарь специализированного совета:

кандидат юридических наук



Дж. А. Айрапетян

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը. Պառլամենտական վերահսկողությունն իրենից ներկայացնում է պետա-իրավական հատուկ ինստիտուտ, որն օրենսդիր մարմնին թույլ է տալիս գործադիր իշխանության գործունեությունը ուսումնասիրել և ստուգման ենթարկել իր կողմից ընդունված օրենքների կատարման առումով: Քանի որ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը, որպես մեր ժողովրդի հավաքական կամքն արտահայտող ներկայացուցչական մարմին, իր կարգավիճակով և ժողովրդաիշխանության իրականացման առաքելությամբ իրավունք ունի ստուգել պետության կառավարման գործընթացն առհասարակ, ապա դրա շրջանակներում ծագող խնդիրների արդյունավետ լուծմանն առավելագույնս նպաստում է վերահսկողական լիազորությունների սահմանադրական ամրագրումը:

Երրորդ Հանրապետության սահմանադրության ընդունումից հետո ընկած տասնամյակում իշխանության թևերի առանցքում օրենսդիր մարմնի դերագրկման գիտակցումը հանգեցրեց սահմանադրության 2005թ.-ի խմբագրության ընդունմանը, սակայն դրանից հետո ծավալված սահմանադրական զարգացումների ընթացքը ցույց տվեց, որ իշխանությունների տարանջատման ու հավասարակշռման մեխանիզմը երկրում չի աշխատում և մեծ հաշվով ՀՀ Նախագահի ու ՀՀ կառավարության դուալիզմով դրսևորվող գործադիր իշխանությունը դուրս է օրենսդիր մարմնի վերահսկողությունից: Այս իրողությունների գիտակցումով, ինչպես նաև ՀՀ Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի կողմից 2014թ.-ի մարտին հրապարակված սահմանադրական փոփոխությունների հայեցակարգում նշված իշխանության թևերի լիազորություններին համարժեք հանրային-իրավական պատասխանատվության ամրագրման նպատակով, կազմակերպվեց և 2015թ.-ի դեկտեմբերի հանրաքվեով ընդունվեց 1995թ.-ի սահմանադրության թվով երկրորդ փոփոխությունը, որի հետևանքով երկիրը 2018թ.-ին անցում կատարեց կառավարման պառլամենտական համակարգին (սահմանադրության որոշ գլուխներ ուժի մեջ են մտել

դեռ 2017թ.-ին, սակայն սահմանադրության 2015թ.-խմբագրությունն ամբողջությամբ ուժի մեջ է մտել 2018թ.-ի ապրիլի 9-ին):

Պառլամենտական վերահսկողության ուժեղացմանը վերաբերող հիմնախնդիրների արդիականությունը պայմանավորված է երկրում պետական իշխանության օրենսդիր մարմնի դերի բարձրացման, իշխանությունների տարանջատման սկզբունքի իրականացումն ապահովող զսպումների և հակակշիռների ճկուն համակարգի ներդրման անհրաժեշտությամբ: Այդ բնագավառում տեսա-իրավական հետազոտությունների ակնհայտ անբավարարությունը թելադրում է նրա կատարելագործման առավել արդյունավետ և ռացիոնալ ճանապարհների որոնման անհրաժեշտությունը:

Մեր երկրում պառլամենտական վերահսկողության ինստիտուտի կատարելագործմանն ու ամրապնդմանն առընչվող թեմայի նկատմամբ աճող հետաքրքրությանը զուգընթաց ակտիվանում են նաև միջազգային փորձի ուսումնասիրման քայլերը: Պետական կառավարման տարբեր ձևեր ընտրած երկրներում, անշուշտ, պառլամենտական վերահսկողության ձևերն ու ծավալները տարբեր են՝ պայմանավորված այդ երկրներում արմատավորված պատմական, քաղաքական, քաղաքակրթական, ազգային և այլ ավանդույթների բազմազանությամբ, սակայն դրանց համալիր ուսումնասիրությունը, անկասկած, բավարար չափով օգտակար նյութ է տալիս սահմանադրական զարգացման այս շրջանում գտնվող մեր պետության համար կարևորագույն այդ ինստիտուտի՝ բովանդակային առումով, առավել ամբողջական ամրագրման համար: Ուստի կարծում ենք, որ սույն ատենախոսության մեջ բարձրացված խնդիրներն ու դրանց լուծմանն ուղղված առաջարկները նույնպես կարող են հետաքրքրություն առաջացնել դարձյալ սահմանադրական փոփոխությունների շեմին գտնվող Հայաստանի Հանրապետության պետական մեխանիզմի գործառնական ներդաշնակության ապահովման առումով, և հաշվի առնելով վերոբերյալ հանգամանքները, պայմանավորում են սույն ատենախոսության ընտրված թեմայի արդիականությունը ոչ միայն տեսական-ճանաչողական, այլև գործնական-կիրառական

նշանակությամբ և կարող են նպաստել ՀՀ Ազգային ժողովի վերահսկողական գործառույթը բարելավելու, կատարելագործելու և ուժեղացնելու գործին:

Թեմայի գիտական հետազոտման աստիճանը. Պառլամենտական վերահսկողության ինստիտուտը լայն ուսումնասիրության առարկա է դարձել հատկապես արևմտյան գրականության մեջ, իսկ Խորհրդային Միության փլուզումից հետո կառավարման նոր ձև ընտրած Ռուսաստանի Դաշնությունում, նաև ԱՊՀ երկրների գիտական շրջանակներում: Մեր երկրում այս թեման բավարար ուշադրության չի արժանացել և գիտական հետազոտությունները հատկապես պառլամենտական վերահսկողության ինստիտուտի վերաբերյալ քիչ են: Հայրենական գրականության մեջ պառլամենտական վերահսկողության ինստիտուտին անդրադարձել են հատկապես Հ. Խաչատրյանը, Ժ. Զհանգիրյանը, Վ. Ստեփանյանը, Ա. Հարությունյանը:

Քննարկվող թեմայի հիմնախնդիրներին իրենց աշխատություններում անդրադարձել են ռուսաստանցի և արևմտյան բազմաթիվ հեղինակներ, որոնցից են Ս. Ավագյանը, Վ. Չիրկինը, Ա. Միշինը, Օ. Բուլակովը, Ա. Հովսեփյանը, Ա. Կորնիլևսկան, Դ. Գուսարովը, Ի. Ռակիտսկայան, Ա. Զելենցովը, Ե. Կովրյակովան, Ա. Տարասովը, Ա. Կոզլովը, Ա. Շայոն և այլք:

Արժանին մատուցելով վերոնշյալ գիտնականների էական ներդրմանը թեմայի հիմնախնդիրների լուսաբանման խնդրում, այսուհանդերձ, աշխատանքում օրենսդիր իշխանության թևի առջև գործադիր իշխանության հաշվետու լինելու հանգամանքն ընդգրկող հարցադրումները համալիր հետազոտման են ենթարկվել և նորովի են մեկնաբանվել:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսության նպատակն է համապարփակ վերլուծության ենթարկել պառլամենտական վերահսկողության ինստիտուտի էությունը, նրա դերն ու նշանակությունը օրենսդիր մարմնի լիազորությունների իրականացման մեխանիզմում, ինչպես նաև վերլուծել ՀՀ Ազգային ժողովի՝ սահմանադրությամբ ամրագրված վերահսկողական լիազորությունների և դրանց իրականացման փաստացի հնարավորությունների հարաբերակցության հիմնախնդիրները:

Ատենախոսության նպատակներին հասնելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

-Բացահայտել պառլամենտական վերահսկողության էությունը, բովանդակությունն ու առանձնահատկությունները,

-Տալ գործադիր իշխանության նկատմամբ իրականացվող պառլամենտական վերահսկողության հասկացության սահմանումը,

-Հետազոտել ՀՀ Ազգային ժողովի կողմից իրականացվող պառլամենտական վերահսկողության տեսակներն ու հիմնական ձևերը,

-Իրականացնել Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանյան երկրներում գործադիր իշխանության նկատմամբ իրականացվող պառլամենտական վերահսկողության իրավա-համեմատական վերլուծություն և գնահատել արտասահմանյան երկրների դրական փորձի ընդօրինակման ու տեղայնացման հնարավորությունները մեր երկրում,

-Հիմնավորել գործադիր իշխանության նկատմամբ պառլամենտական ուժեղ և գործուն վերահսկողության ձևավորման անհրաժեշտությունը և կանխորոշել դրա իրականացման հիմնական ուղիները,

-Հետազոտել Հայաստանի Հանրապետությունում գործադիր իշխանության նկատմամբ իրականացվող պառլամենտական վերահսկողության բովանդակությունը նրա դրսևորման կոնկրետ օրինակների հիման վրա,

-Ուսումնասիրել ՀՀ Ազգային ժողովի կողմից իրականացվող սահմանադրաիրավական նորմերով ամրագրված պառլամենտական վերահսկողության ձևերն ու դրանց փաստացի իրականացման հնարավորությունները և պառլամենտական վերահսկողության բարելավման ու արդյունավետության բարձրացման ուղիներ առաջարկել բովանդակային առումով:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:

1. Պառլամենտական վերահսկողության էական հատկանիշների հիման վրա մշակվել է նրա ընդհանուր հասկացության սահմանումը.

Պառլամենտական վերահսկողությունը պետական իշխանության կրողը հանդիսացող ժողովրդի կողմից իր կամքն արտահայտող օրենսդիր մարմինն անմիջականորեն պատվիրակված լիազորություն է՝ ժողովրդի անունից և ի շահ նրա ընդունված օրենքների կատարման ուղղությամբ գործադիր իշխանության իրականացրած գործունեությանը հետևելու, դրանց կատարման ընթացքը ստուգելու և ոչ պատշաճ կատարումից առաջացած հետևանքները վերացնելու պարտականության բաղկացուցիչով՝ քաղաքական կամ իրավաբանական պատասխանատվության միջոցների պարտադիր կիրառմամբ:

Ժողովուրդը՝ որպես պետության ներսում իշխանության միակ աղբյուր, գործադիր իշխանությանը վերահսկելու իր իրավունքը լիազորության տեսքով պատվիրակել է օրենսդիր մարմնին, որն արդեն չի կարող դա հայեցողաբար օգտագործել և կաշկանդված է իրավատիրոջ հանձնարարությունը պատշաճ կատարելու պարտականությամբ:

2. Թեև 2015թ. խմբագրությամբ սահմանադրությունը 4-րդ հոդվածով ամրագրել է իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը պետական իշխանության դասական եռաթև համակարգի գործառնության համատեքստում, սակայն հստակ չի սահմանել, թե այդ համակարգում որ՞ մարմիններին է վերապահված իշխանության կոնկրետ ճյուղի կրողը լինելու իրավունքը: Դա հատկապես վերաբերվում է իշխանության գործադիր ճյուղին, որը հանրային ընկալման մեջ ավանդաբար հանդես է գալիս և՛ նախագահի և՛ կառավարության դեմքով: Սահմանադրությամբ նախատեսված են անկախ մարմիններ, որոնք պետական մեխանիզմում իրենց կարգավիճակով անորոշ են և իշխանության երեք թևերից որևէ մեկին չեն վերաբերում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ինչպես ՀՀ նախագահի, այնպես էլ սահմանադրական անկախ մարմինների գործառույթներն իրենց էությամբ գործադիր բնույթի են, պարզ է դառնում, որ այդպիսի կարգավորումը անորոշություն է առաջացնում հենց պառլամենտական վերահսկողության իրավունքը սահմանող նորմի իրականացման առումով և նեղացնում է Ազգային ժողովի՝ գործադիր իշխանության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու սահմանադրական նորմի գործողության ոլորտը:

3. Պառլամենտական կառավարման պայմաններում Ազգային ժողովի գործուն և իրական վերահսկողության ապահովումը խնդրահարույց է վարչապետի ձեռքում գործադիր իշխանության գերկենտրոնացման ներկայիս կարգավորման դեպքում՝ նաև այն իրողության հաշվառմամբ, որ գործադիր իշխանությունն ու պառլամենտական մեծամասնությունը փաստացի ներկայացնում է քաղաքական միևնույն ուժը: Այս պարագայում առաջնային է այն հարցը, թե վարչապետի և կառավարության ձեռքում պետական իշխանության այդպիսի ծավալի կենտրոնացումը հավասարակշռվում է՝ արդյոք 2015թ. փոփոխություններով սահմանադրությամբ ամրագրված վարչապետի նույնչափ համարժեք քաղաքական պատասխանատվությամբ, թե՞ ոչ, առկա ե՞ն արդյոք բավականաչափ գործուն մեխանիզմներ այդ պատասխանատվության վրա հասնելու համար: Պառլամենտական կառավարումը 2015թ. սահմանադրության նոր փոփոխություններով երկրում այնպիսի մեխանիզմներով է ամրագրվել, որ գործադիր ամբողջ իշխանությունը փաստացի կենտրոնացվել է Հանրապետության վարչապետի ձեռքում, նախագահը վերածվել է արարողակարգային ֆիգուրի, ուժային կառույցների ղեկավարները նշանակվում են վարչապետի կամքով, ենթարկվում են նրան և դուրս են Ազգային ժողովի վերահսկողությունից: Պետական իշխանության հավասարակշռությունը վերականգնելու համար առաջարկվում է խելամիտ ապակենտրոնացման միջոցով վարչապետի գերիզոր լիազորությունների մի մասը փոխանցել Հանրապետության նախագահին և կառավարությանը: Առաջարկվում է ՀՀ Ազգային անվտանգության ծառայությունը դուրս բերել վարչապետի ենթակայությունից, դարձնել նախարարություն և նրա նույնպես տարածել պառլամենտին հաշվետու լինելու պարտավորություն:

4. Առենախոսության մեջ գնահատվել են Հայաստանի Հանրապետությունում պառլամենտական վերահսկողության արդյունավետության վրա ազդող հանգամանքները և դրանց շարքում, որպես առանձնահատուկ գործոն, առանձնացվել է օրենսդիր մարմնում ներկայացված կուսակցությունների՝ ի դեմս նրանց խմբակցությունների, գործադիրի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու մոտիվացիան:

Սահմանադրական պրակտիկայով ապացուցվել է, որ Ազգային ժողովում գերակշիռ մեծամասնություն ունեցող և միաժամանակ գործադիր ամբողջ իշխանությունն իրականացնող միևնույն քաղաքական ուժի փաստացի կառավարման պայմաններում սեփական գործունեության թերություններն ու սխալները բացահայտելու տրամաբանությունը չկա, և որպես հետևանք, չկա նաև գործադիր իշխանության նկատմամբ այդ քաղաքական ուժի կողմից համակողմանի վերահսկողության իրականացման «անհրաժեշտությունը»: Այսինքն իշխող կուսակցությունը պառլամենտական վերահսկողություն իրականացնելու մոտիվացիա պարզապես չունի:

Այնպիսի պայմաններում, երբ կառավարությունն ամբողջությամբ ձևավորվում է քաղաքական մեկ ուժի կողմից և նրա ներկայացուցիչները մեծամասնություն են կազմում օրենսդիր մարմնում, այդ մեծամասնությունն ավելի շուտ կառավարության համակիրն է, քան ընդդիմախոսը: Հետևաբար նշանակում է, որ այդ կառավարության իրական հակակշիռը կարող է դառնալ միայն սահմանադրական կարգավորմամբ իրավական կարգավիճակ և հատուկ իրավունքներ ունեցող պառլամենտական ուժեղ ընդդիմությունը: Առաջարկվում է պառլամենտական փոքրամասնության ինստիտուցիոնալ կարգավիճակն ու գործունեության երաշխիքները սահմանել «Ընդդիմադիր գործունեության մասին» սահմանադրական օրենք ընդունելու միջոցով:

5. Հայաստանի Հանրապետությունում գործադիր իշխանության նկատմամբ իրականացվող պառլամենտական վերահսկողությունն առավելապես տեղեկատվական, խորհրդատվական և ըստ այդմ նաև ձևական բնույթ է կրում, քանի որ հաշվետվություն-հաղորդումների ներկայացման ընթացակարգերը՝ հատկապես պետական բյուջեի կատարման գործընթացի վերահսկման ոլորտում, խորհրդարանի համար նախատեսում են մեծամասամբ «ի գիտություն ընդունելու» իրավասություն: Օրենսդիր մարմինը լրջորեն սահմանափակված է գործադիր իշխանության թույլ տված շեղումների և սխալների համար համապատասխան կոնկրետ միջոցներ կիրառելու հնարավորության մեջ և՛ ձևերի և՛ հատկապես դրանց իրականացման փաստացի հնարավորության առումով:

Առաջարկվում է բյուջեի կատարման տարեկան հաշվետվության ընդունումը Ազգային ժողովի կողմից մերժելը դիտել հավասարազոր բյուջեն չընդունելու և ամրագրել սահմանադրական նույն հետևանքը՝ կառավարության հրաժարականը:

6. Ատենախոսության մեջ իրավահամեմատության և վերլուծության միջոցով փաստարկվել է այն թեզը, որ պետական մեխանիզմի հավասարակշիռ գործառնության տեսանկյունից կառավարման ձևի մեկընդմիջտ տրված սահմանադրական մոդել՝ այն ընդօրինակած երկրների համար նույնությամբ վերաբերելի, գոյություն չունի: Որևէ երկրի կառավարման ձևը չի կարող 100 տոկոսով օրինակելի մոդել դառնալ, ճիշտ համարվել և նույնությամբ կիրառվել այն ընդօրինակող երկրում, քանի որ սահմանադրական իրավիճակը՝ այն ձևավորող գործոնների ազգային հատկանիշների կազմով պայմանավորված, յուրաքանչյուր երկրում անկրկնելի է:

Ըստ կառավարման ձևերի դասական դարձած յուրաքանչյուր մոդելի հայրենիքում օրինակ՝ ԱՄՆ-ում, Իտալիայում, Ֆրանսիայում (համապատասխանաբար նախագահական հանրապետություն, պառլամենտական հանրապետություն, կիսանախագահական հանրապետություն) այդպիսի ընտրությունը պայմանավորված է եղել բացառապես (և ապագայում էլ նոր մոդելների ի հայտ գալու դեպքում պայմանավորված կլինի) այն ձևավորող գործոնների յուրահատուկ՝ միայն այդ երկրներին վերաբերելի ազգային կազմով: Հիմնավորվում է, որ կառավարման ձևի ընտրություն կատարելիս բնույթով ազգային այդ կազմի մեջ մտնող պատմական, քաղաքական, մշակութային, քաղաքակրթական, կրոնական և այլ գործոններից բացի, մեր համար իր կարևորությամբ որպես առանձնահատուկ գործոն պետք է դիտել նաև պետական կամ ազգային շահը, որն առաջանում է մետրոպոլիայից անջատվելիս՝ անկախ պետականություն կառուցելու ժամանակ և պետք է գերակա լինի մետրոպոլիայի շահից՝ չնույնանալով վերջինիս:

7. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի վերահսկողական գործունեության իրավակարգավորման հիմքերի վերլուծության և փաստացի ձևավորված պրակտիկայի արդյունքներով հիմնավորվում է այն տեսակետը, որ վերահսկողությունը չպետք է սահմանափակվի միայն կառավարության գործունեության շրջանակներով, այլ

պետք է տարածվի նաև պետության գլխի, վարչապետի, բոլոր տեսակի հատուկ ծառայությունների, ուժային կառույցների, կենտրոնական դրամատան նկատմամբ՝ կառավարման ոլորտում գործադիր իշխանության իրականացրած գործունեությանը հետևելու, դրա կատարման ընթացքը ստուգելու, ոչ պատշաճ կատարումից առաջացած կամ հայտնաբերված օրինախախտումների հետևանքները վերացնելու համար՝ քաղաքական կամ իրավաբանական պատասխանատվության գործուն միջոցների պարտադիր կիրառումը նախատեսող սահմանադրական լուծումների միջոցով:

8. 2015թ. փոփոխություններով սահմանադրությունը որոշակիորեն սահմանափակել է Ազգային ժողովի իրավունքը պետական բյուջեի կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու հարցում, քանի որ այդ լիազորությունը բովանդակային առումով վերապահվել է Հաշվեքննիչ պալատին, որն իր իրավանախորդ՝ վերաքննիչ պալատի նման կարգավիճակով մնացել է օրենսդիր մարմնից անկախ և նախորդի նման իշխանությունների տարանջատման սկզբունքի տեսանկյունից պետական մեխանիզմում նրա զբաղեցրած տեղը մնում է խնդրահարույց: Առաջարկվում է վերադառնալ Աժ վերահսկիչ պալատ նախկին անվանմանն ու սկզբնական կարգավիճակին, այդ մասնագիտական մարմինը նորից դարձնել պառլամենտական ենթակայության՝ օրենքով սահմանելով վերահսկիչ պալատի կազմակերպական ու գործառույթային (ֆունկցիոնալ) անկախությունը վերջինս առջև դրված խնդիրների շրջանակներում:

9. ՀՀ սահմանադրական ներկայիս իրավակարգավորմամբ քննիչ հանձնաժողովները ձևավորվում են խմբակցություններում ընդգրկված պատգամավորների թվի համամասնության սկզբունքով, ինչով պայմանավորված հանձնաժողովի աշխատանքի արդյունավետությունը՝ ակնկալվող իրավական և քաղաքական հետևանքների առումով, չի կարող միանշանակ /գոհացուցիչ/ լինել: Գործադիր իշխանության համար պատասխանատու քաղաքական ուժի /կամ ուժերի/ ներկայացվածությունը քննիչ հանձնաժողովում զգալիորեն գերազանցելու է այդ իշխանության քաղաքականությունը չկիսող, քննիչ հանձնաժողով ստեղծելու առաջարկն անող ընդդիմադիր ուժին կամ ուժերին, և քանի որ, քննիչ հանձնաժողովի

գործունեության արդյունքներն արձանագրող եզրակացությունները կայացվում են քվեարկությամբ, ակնհայտ է, որ իշխող ուժի համար ոչ ձեռնտու արդյունքների արձանագրումը հանձնաժողովում իշխող ուժի ներկայացուցիչների կողմից քվեարկության միջոցով պարզապես կարգելափակվի: Ժամանակավոր հանձնաժողովներ ստեղծելու նախաձեռնողականությունը, դրանց նպատակի և խնդիրների համատեքստում գործունեության ամբողջականությունն ու հետևողականությունն այն չափորոշիչներն են, որոնք պայմանավորում են խորհրդարանի ինստիտուցիոնալ անկախությունը:

Քննիչ հանձնաժողովների կողմից վերահսկողության իրենց լիազորությունները արդյունավետ իրականացնելու համար առաջարկվում է վերանայել դրանց ձևավորման կարգը այնպես, որպեսզի այդ հանձնաժողովների կազմում գերակշռություն կազմեն կամ պաշտպանական ընդդիմության ներկայացուցիչները, կամ առնվազն մեծամասնության և ընդդիմության ներկայացուցիչները ներգրավվեն պարիտետային սկզբունքով:

10. Գործող սահմանադրությամբ խիստ սահմանափակ լիազորություններով նախագահին ի զորու չէ կատարել սահմանադրության պահապանի իր գործառույթը: Փաստացի խախտված է «գործառույթ-ինստիտուտ-լիազորություն» շղթայի ներդաշնակությունը, քանի որ պետական մարմինների միջև ինստիտուցիոնալ հեղինակությամբ օժտված անաչառ արբիտր լինելու, քաղաքական խնդրահարույց իրավիճակների դեպքում համապետական և համազգային շահերով առաջնորդվելու սահմանադրության պահապանի գործառույթը ենթադրում է ինքնահայաց գործելու համապատասխան լիազորությունների առկայություն, ինչը նախագահի մոտ իսպառ բացակայում է: Կառավարությունից և պատգամավորներից անկախ համապետական շահեր հետապնդող օրակարգ և դրանից բխող լուծումներ ներկայացնելու, օրինաստեղծության պրոցեսն ավելի հավասարակշռելու համար առաջարկվում է նախագահին օժտել սահմանադրական համաձայնություններ կնքելու ինքնահայաց իրավունքով, քաղաքացիության տրամադրման ու ներում շնորհելու հարցերի լուծման ինքնուրույնությամբ, օրենսդրական նախաձեռնության իրավունքով և նրան վերապահել օրինագծերին առարկելու լիազորություն:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Ատենախոսության հետազոտության օբյեկտը ՀՀ պառլամենտական վերահսկողության սուբյեկտների կողմից վերահսկողության ընթացքում իրականացվող լիազորությունների կապակցությամբ առաջացող հարաբերությունների ամբողջությունն է:

Թեմայի մեթոդաբանության հիմքը:

Հետազոտության ընթացքում կիրառվել են գիտական տարբեր մեթոդներ. մասնավորապես ինդուկցիա, դեդուկցիա, ինչպես նաև պատմական, ձևական տրամաբանության, նկարագրական, համակարգային վերլուծության, սոցիոլոգիական, ինչպես նաև իրավական համեմատության մեթոդը, որը մնացած մեթոդների հետ համակցության մեջ հնարավորություն է տալիս վեր հանել պետական կառավարման միևնույն և տարբեր ձևերի պայմաններում գործող պառլամենտական վերահսկողության ձևերն ու տեսակները, համեմատել դրանք Հայաստանի Հանրապետությունում ամրագրված ձևերի հետ:

Հետազոտության տեսական հիմքը վերը նշված հայրենական և արտասահմանյան հեղինակների՝ Հ. Խաչատրյանի, Ժ. Զհանգիրյանի, Վ. Ստեփանյանի, Ա. Հարությունյանի, Ս. Ավագյանի, Վ. Չիրկինի, Ա. Միշինի, Օ. Բուվակովի, Ա. Հովսեփյանի, Ա. Կորնիլևսկաի, Դ. Գուսարովի, Ի. Ռակիտսկայայի, Ա. Ջելենցովի, Ե. Կովդյակովայի, Ա. Տարասովի, Ա. Կոզլովի, Ա. Շայոյի և այլոց աշխատություններն են:

Հետազոտության նորմատիվ-իրավական հիմքը միջազգային և ներպետական իրավական ակտերն են՝ այդ թվում ՀՀ սահմանադրությունը:

Ատենախոսության գիտական նորույթը: Ատենախոսությունում առաջին անգամ հայրենական իրավագիտության մեջ՝ ծագման, զարգացման ու կայացման ժամանակաշրջանների հաշվառմամբ, փորձ է արվել համալիր, ամբողջական և համակողմանի ուսումնասիրման ենթարկել պառլամենտական վերահսկողության ինստիտուտը, տրվել է «պառլամենտական վերահսկողություն» եզրույթի սահմանումը, բացահայտվել դրա էությունը, բաղկացուցիչներն ու բնորոշ հատկանիշները: Ցույց է տրվել դրա զարգացման տարբեր պատմական փուլերի ընթացքում կրած

փոփոխություններն ու դրանց պատճառական կապը պառլամենտական վերահսկողության ներկայիս բովանդակության հետ:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից (11 ենթագլուխներով), եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսության ծավալը համակարգչային 180 էջ է:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ներածությունում հիմնավորվում է հետազոտության թեմայի արդիականությունը, ներկայացվում են մշակվածության աստիճանը, հետազոտության օբյեկտը և առարկան, նպատակը և խնդիրները, հետազոտության տեսական, իրավական հիմքերը, մեթոդաբանությունը, գիտական նորույթը, ձևակերպվում են պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, ներկայացվում են հետազոտության տեսական և գործնական նշանակությունն ու հետազոտության արդյունքների փորձարկումը:

Աշխատանքի «Պառլամենտական վերահսկողության տեսական և պատմական հիմնահարցերը պետական վերահսկողության համատեքստում» վերտառությամբ առաջին գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին գլխի «Պառլամենտական վերահսկողության հասկացությունը և բնորոշ գծերը» վերնագրով առաջին ենթագլխում բացահայտվել են պառլամենտական վերահսկողության բովանդակությունը, նրա ձևավորման սոցիալական արմատներն ու նշանակությունը, բնորոշ հատկանիշները:

Առաջին գլխի «Պետական վերահսկողության զարգացման փուլերը և պառլամենտական վերահսկողության ինստիտուտի ձևավորումը» վերնագրով երկրորդ գլխում ներկայացվել են պառլամենտական վերահսկողության ինստիտուտի ծագման, զարգացման և կայացման ժամանակահատվածներն իրենց պատմական փուլերով, բացահայտվել է դրա էությունը: Հանգամանալի վերլուծության են ենթարկվել պառլամենտական վերահսկողության մասին գաղափարները, դրա դրսևորումները Հայաստանից դուրս հայ գործիչների աշխատություններում: Ցույց են տրվել դրա զարգացման տարբեր պատմական փուլերի ընթացքում կրած փոփոխություններն ու

դրանց պատճառական կապը պառլամենտական վերահսկողության ներկայիս բովանդակության հետ:

Առաջին գլխի «**Պառլամենտական վերահսկողության տեսաիրավական բնութագիրը**» վերտառությամբ երրորդ ենթագլխում ներկայացվել են պառլամենտական ինստիտուտի գիտական գրականության մեջ առկա տարբեր որոշարկումները, տրվել է «պառլամենտական վերահսկողություն» եզրույթի սեփական սահմանումը, հանգամանորեն ներկայացվել են պառլամենտական վերահսկողության ինստիտուտի ամրագրման տեսաիրավական հիմքերը համեմատական վերլուծության համատեքստում, բացահայտվել են դրա դրսևորման առանձնահատկությունները կառավարման տարբեր ձևերի պայմաններում:

Աշխատանքի երկրորդ գլուխը՝ «**Պառլամենտական վերահսկողության տեսակները, ձևերը, դասակարգման հիմքերը և դրանց իրավական կարգավորման ու կիրառման հիմնախնդիրները**» վերնագրով, բաղկացած է վեց ենթագլխից:

Այդ գլխի՝ «**Պառլամենտական վերահսկողության տեսակները, ձևերը և դասակարգման սահմանադրական հիմքերը**» վերնագրով առաջին ենթագլխում վեր են հանվել պառլամենտական վերահսկողության տարբերակման, դասակարգման գիտական հիմքերը, մանրամասն վերլուծվել են դրա տեսակները, ձևերը, տեսակներն ու փուլերը, հանգամանորեն հետազոտվել են պառլամենտական վերահսկողության տարբեր տեսակների արդյունավետության դրսևորման նախապայմանները և դրանց կիրառման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում:

Աշխատանքի երկրորդ գլխի «**Հարցերն ու հարցապնդումները և դրանց իրավակարգավորումը ՀՀ-ում**» վերնագրով ենթագլխում հանգամանորեն վեր են հանվել պառլամենտական վերահսկողության տեսակ համարվող հարցերի և հարցապնդումների ինստիտուտի տեսաիրավական հիմքերը, դրանց դրսևորումները կառավարման տարբեր ձևեր ունեցող երկրների օրենսդիր մարմիններում, ինպես նաև կոնկրետ վիճակագրությամբ ցույց է տրվել ՀՀ Ազգային ժողովի կողմից գործադիր

իշխանության նկատմամբ պառլամենտական վերահսկողության այս տեսակի հետագիծը երրորդ Հանրապետությունում և կիրարկման ցածր արդյունավետությունը: Միջազգային փորձի և ՀՀ սահմանադրական պրակտիկայի վերլուծության հիման վրա հեղինակն առաջարկել է նույն նստաշրջանի ընթացքում կառավարության անդամներին ընդամենը մեկ անգամ հարցապնդումով դիմելու առկա սահմանափակումը:

Աշխատանքի երկրորդ գլխի «**Պառլամենտական մարմինների միջոցով հետաքննության իրականացումը և ՀՀ սահմանադրական պրակտիկան**» վերնագրով ենթագլխում հանգամանորեն բացահայտվել է քննիչ հանձնաժողովների միջոցով օրենսդիր մարմնի կողմից վերահսկողություն իրականացնելու այս ձևի էությունը, հետաքննության իրականացման ամբողջ շղթան իր փուլերով: Մի շարք երկների օրինակով ցույց է տրվել, որ քննիչ հանձնաժողովների գործունեության միջոցով գործադիր իշխանության վրա ներազդելու հնարավորություններն ու արդյունավետության պատճառը ոչ միայն կառավարման ձևն է, այլ նաև տվյալ երկրում արմատավորված քաղաքական մշակույթը, քաղաքական համակարգում կուսակցությունների զբաղեցրած դիրքն ու տեղը, պետական ռեժիմը, ձևավորված սահմանադրական ավանդույթները, իրավաբանական ու փաստացի սահմանադրությունների հարաբերակցությունը և այլն:

Աշխատանքի երկրորդ գլխի «**Իմփիչմենթի ինստիտուտը և սահմանադրական կարգավորումը ՀՀ-ում**» վերտառությամբ ենթագլխում հետազոտության առարկա է հանդիսացել իմփիչմենթի վարույթը որպես արտադատական պատասխանատվության հատուկ տեսակի, որի անմիջական սահմանադրաիրավական հետևանքը պետության գլխի պաշտոնանկությունն է՝ վերջինիս նկատմամբ քրեական հետապնդում սկսելու հետագա հնարավորությամբ: Հաշվի առնելով ՀՀ գործող սահմանադրությամբ նախագահի պաշտոնանկության համար սահմանված բացառապես իրավական հիմքերը՝ պառլամենտական կառավարման ձևի պայմաններում այդ հարցի ելքը քաղաքական նպատահարմարությունից զերծ պահելու նպատակով, հեղինակն առաջարկել է նախագահին պաշտոնանկ անելու իրավունքը վերապահել սահմանադրական

դատարանին, քանի որ վերջինիս որոշումը իրավաբանորեն հիմնավորված է, պարտադիր է և միջնորդավորված իրականացում չի պահանջում:

Աշխատանքի երկրորդ գլխի «**Կառավարությանն անվտանգություն հայտնելը կամ վստահության քվե չտրամադրելը**» վերնագրով ենթագլխում ուսումնասիրվել է պառլամենտական վերահսկողության ըստ էության բարձրագույն ձևը, վերլուծվել է դրա ամրագրման տեսաիրավական հիմքերը, առանձնահատկություններն ու կիրառման արդյունավետությունը կառավարման նախագահական և պառլամենտական ձևի պայմաններում: Մեր երկրում ձևավորված սահմանադրական պրակտիկայի հաշվառմամբ հեղինակը հիմնավորել է, որ սահմանադրական ներկայիս կարգավորմամբ կառավարությանն անվտանգություն հայտնելու համար պատգամավորների ընդհանուր թվի ձայների 1/3-ի սահմանադրական պահանջը չհիմնավորված բարձր շեմ է և այն պետք է վերանայվի, քանի որ, այդպիսի կոշտ սահմանափակումն ընդհանրապես զրկում է օրենսդիր մարմնին վերահսկողության այդ ձևից օգտվելու իրավունքից:

Աշխատանքի երկրորդ գլխի «**Ազգային ժողովի վերահսկողության իրականացումը ֆինանսաբյուջետային ոլորտում**» վերնագրով վերջին ենթագլխում ամբողջական հետազոտման են ենթարկվել օրենսդիր մարմնի և կառավարության փոխհարաբերությունները պետական բյուջեի ընդունման և կատարման ոլորտում 1995թ.-ի սահմանադրության և դրա երկու փոփոխությունների համատեքստում: Արձանագրվել է, որ դա վերահսկողության առանձնահատուկ տեսակ է, որը նաև որպես գործառույթ նպատակ ունի ապահովել հասարակության կենսագործունեության բոլոր ոլորտների համար անհրաժեշտ նյութական ու ֆինանսական միջոցների ձևավորման, արդյունավետ օգտագործման իրականացման գործընթացը և ծագում է պետության բյուջեն հաստատելու, այսինքն՝ կառավարությանը ծախսեր կատարելու թույլտվություն տալու՝ օրենսդիր մարմնին պատկանող բացառիկ իրավունքից: Հիմնավորվել է, որ սահմանադրական ներկայիս կարգավորմամբ բյուջեի կատարման նկատմամբ ընթացիկ վերահսկողության փուլում հնարավոր անհամապատասխանություն, խեղաթյուրում կամ այլ խախտումներ ի հայտ գալու դեպքերում Ազգային ժողովը սահմանափակված է իր

գործիքների մեջ և ստիպված է բավարարվել միայն իրավասու հանձնաժողովում քննարկումների անցկացմամբ, որոնք իրավական որևէ հետևանք չեն առաջացնում: Իսկ պետական բյուջեի կատարման մասին կառավարության տարեկան հաշվետվությունը Ազգային ժողովի որոշմամբ չընդունվելու դեպքում կառավարության համար որևէ պատասխանատվություն նախատեսված չէ: Կարգավորման նման բացն ինքնին խնդրահարույց է Ազգային ժողովի բյուջետային /ֆինանսական/ վերահսկողության իրականացման առումով և չի նպաստում կառավարությանն ավելի պատասխանատու դարձնելու սահմանադրական նպատակին: Վեր հանված այդ հիմնախնդիրների համար միաժամանակ առաջարկվել են լուծման ուղիներ:

Աշխատանքի՝ «**Պառլամենտական ինստիտուտի զարգացման դինամիկան և դրա կատարելագործման անհրաժեշտությունը Հայաստանի Հանրապետությունում**» վերնագրով երրորդ գլուխը բաղկացած է երեք ենթագլուխներից:

Աշխատանքի երրորդ գլխի «**ՀՀ Երրորդ Հանրապետության սահմանադրական զարգացման առանձահատկություններն ու պառլամենտական վերահսկողության ինստիտուտի կայացման նախադրյալները**» վերնագրով առաջին ենթագլխում համակողմանի ուսումնասիրության է ենթարկվել Երրորդ Հանրապետության սահմանադրական /պետական/ շինարարության ընթացքը, առանձին փուլերը՝ սկսած 1990թ. ից՝ երկրի կառավարման ձևի ընտրության հարցերից մինչև 2015թ. ի սահմանադրական փոփոխությունները: Անդրադարձ է կատարվել ՀՀ-ում ընդունված 1995թ. սահմանադրությամբ և նրա 2005թ. ու 2015թ. փոփոխություններով ամրագրված օրենսդիր և գործադիր մարմինների փոխհարաբերությունների համակարգին, գնահատվել է Ազգային ժողովի վերահսկողական լիազորությունների գործիքակազմը այդ համատեքստում, դրա արդյունավետությունը իրավաբանական և փաստացի սահմանադրությունների համադրմամբ: Հիմնավորվել է, որ անկախ պետականության հաստատումից մինչև 2017թ.-ի խորհրդարանական ընտրություններին հաջորդող ժամանակահատվածում պառլամենտական վերահսկողության ինստիտուտի ընթացքը զարգացման վարընթաց հետագիժ է արձանագրել ինչպես սահմանադրաիրավական ոչ

բավարար կարգավորման ամրագրման, այնպես էլ պետական իշխանության մարմինների համակարգում ՀՀ Ազգային ժողովի դերի հետևողական նվազման առումով:

Աշխատանքի երրորդ գլխի «**իշխանությունների տարանջատումը որպես պառլամենտական վերահսկողության իրականացման իրական հիմք. զարգացման միտումները Հայաստանի Հանրապետությունում**» վերնագրով երկրորդ ենթագլխում հետազոտվել են պառլամենտական վերահսկողության իրական դրսևորման և պետական իշխանության թևերի հավասարակշիռ տարանջատման փոխկապակցվածության խնդիրները, հեղինակի կողմից այդ հարաբերությունները համեմատական վերլուծության են ենթարկվել կառավարման նախագահական և պառլամենտական ձևերն ամրագրած տարբեր երկրների օրինակներով: Հեղինակն այդ համատեքստում մասնավորեցրել է Հայաստանում կիսանախագահական և պառլամենտական կառավարման համակարգերի պայմաններում պառլամենտական վերահսկողության իրական արդյունավետության ապահովման հիմնախնդիրները և հիմնավորել, որ դրանք կարող են լուծվել գործադիր իշխանության և պատասխանատվության միության սկզբունքի ամրագրման դեպքում:

Աշխատանքի երրորդ գլխի «**Պառլամենտական վերահսկողության ձևերի ինստիտուցիոնալ (համակարգային) վերակառուցումը**» վերնագրով երրորդ ենթագլխում ներկայացնելով մի շարք արտասահմանյան երկրների պառլամենտական վերահսկողության սահմանադրական կարգավորման փորձն ու դրանց համեմատական վերլուծության արդյունքում արված եզրահանգումները, հեղինակը քննության է ենթարկել ՀՀ Ազգային ժողովի վերահսկողական գործիքակազմը գործադիր իշխանության նկատմամբ և արդյունքների հիման վրա առաջարկել է սահմանադրական կարգավորմամբ հատուկ իրավունքներ վերապահել պառլամենտական ընդդիմությանը ֆինանսաբյուջետային վերահսկողության, պառլամենտական հետաքննությունների անցկացման, ընտրությունների կազմակերպման և անցկացման ոլորտներում: Գործադիր իշխանության և պատասխանատվության միության սկզբունքի ամրագրման շրջանակներում հեղինակն առաջարկել է վերահսկողությունը տարածել նաև պետության

գլխի, բոլոր տեսակի հատուկ ծառայությունների, ուժային կառույցների, կենտրոնական դրամատան նկատմամբ:

Ատենախոսության հեղինակը շարադրել է հետազոտության արդյունքների հիման վրա մշակված եզրակացությունները, որոնք հանգում են հետևյալին.

1. Պառլամենտական վերահսկողությունը պետական վերահսկողության հիմնական ձևերից մեկն է, որն իրականացնելու իրավունքը պատկանում է բացառապես օրենսդիր մարմնին և տարածվում է գործադիր իշխանության գործունեության բոլոր ոլորտների վրա: Սա և՛ որպես լիազորություն և՛ որպես գործառույթ բխում է ժողովրդի հավաքական կամքն արտահայտող օրենսդիր մարմնի ներկայացուցչականությունից՝ ժողովրդաիշխանության մանդատից, և հենց այդ պատճառով էլ ցանկացած պետության օրենսդիր մարմնին՝ անկախ երկրի կառավարման ձևից և «գապումների ու հակակշիռների» համակարգում նրա համար հատկացված տեղից, ներհատուկ է գործադիր իշխանության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու իրավունքը:

Այդ հիմքով կարելի է ասել, որ գործադիր իշխանության գործունեության նկատմամբ վերահսկողության լիազորությունը պառլամենտի բնական հատկությունն է և նրա ներկայացուցչականության քաղաքական ու իրավաբանական դրսևորումը:

2. Սկզբնապես պառլամենտական վերահսկողությունը սոցիալական արմատներ ու նշանակություն է ունեցել և նրա իրական բովանդակությունը պարզապես հանգել է բացարձակապետությունն այլևս չհանդուրժող, թագավորի հետ իշխանությունը երկրում կիսել ցանկացող նոր ազնվականության՝ ինքնակալի անսահման իշխանությունը սահմանափակելու ձգտմանը: Այդ պատճառով էլ, նախ պառլամենտական վերահսկողությունն ի հայտ գալու սկզբնական ժամանակներից իր գործառույթային նշանակությամբ ընկալվել է որպես անմիջականորեն պառլամենտի անդամների կողմից իրականացվող գործունեություն, և հետո, պառլամենտական վերահսկողությունը իր սկզբնական կոնկրետ պատմական և սոցիալական նշանակությամբ նախատեսել է վերահսկողություն հատկապես գործադիր բարձրագույն իշխանության նկատմամբ, իսկ

ավելի կոնկրետ այն պաշտոնատար անձի /թագավորի/ նկատմամբ, որն անկախ իր իրավաբանական և փաստացի կարգավիճակից իրականացրել է երկրի ներքին և արտաքին կառավարումը:

3. Պետական ցանկացած գործունեություն հիմնվում է որոշակի սկզբունքների վրա, որոնք այն իրականացնելիս ելակետ են հանդիսանում՝ այդ թվում նաև պառլամենտական վերահսկողության համար: Հայաստանի Հանրապետությունում իրականացվող պառլամենտական վերահսկողության ընդհանուր սկզբունքների շարքին կարելի է դասել օրինականության, ժողովրդաիշխանության, քաղաքական բազմակարծության, մարդու և քաղաքացու իրավունքների ու շահերի գերակայության, իշխանությունների տարանջատման, օրենսդիր մարմնի գործունեության անընդհատականության, գործունեության թափանցիկության, կոլեգիալության սկզբունքները և այլն:

4. Պառլամենտական վերահսկողության արդյունավետության գործոններ են համարվում՝

ա/ Հայաստանի Հանրապետություն ամրագրված օրենսդիր և գործադիր իշխանությունների փոխհարաբերությունների մեխանիզմը, որը բնորոշվում է կառավարման ձևով, պետական ու քաղաքական ռեժիմներով,

բ/ Պառլամենտական իշխող մեծամասնության և ընդդիմադիր փոքրամասնության միջև կառուցողական աշխատանքային փոխհարաբերությունների առկայությունը՝ փոքրամասնության իրավունքների ինստիտուցիոնալ կառուցակարգերի ամրագրմամբ,

գ/ Երկրում գործող ընտրական համակարգերի և բազմակուսակցական այնպիսի համակարգի առկայությունը, որոնք գաղափարահենք մրցակցային մթնոլորտ են ձևավորում քաղաքական իշխանության համար պայքարող կուսակցությունների համար, ինչը նշանավորում է դրանց ազդեցության աստիճանը քաղաքական համակարգի վրա,

դ/ Բարձր իրավագիտակցությամբ և իր ապագայի համար նախանձախնդիր քաղաքացիական ակտիվ հասարակության առկայությունը,

ե/ Իրապես անկախ մամուլի և տեղեկատվություն այլ միջոցների բազմազանության առկայությունը և այլն;

5. Պառլամենտական վերահսկողության ինստիտուտի ձևավորման ու կայացման գործընթացն իր առարկայական ու բովանդակային արտահայտությամբ Հայաստանի Երրորդ Հանրապետության ստեղծումից ի վեր մինչև օրս վարընթաց զարգացման հետագիծ է արձանագրել ինչպես սահմանադրաիրավական ոչ բավարար կարգավորման ու ծավալով նվազ ամրագրման՝ հետևաբար իրավաբանական սահմանադրության առումով, այնպես էլ այդ կարգավորումից զատ պետական իշխանության մարմինների համակարգում ՀՀ Ազգային ժողովի դերի հետևողական նվազմամբ պայմանավորված իրավաբանականից տարբերվող փաստացի սահմանադրության առումով:

6. Օրենսդիր ներկայացուցչական մարմնի առաջնային համարվող օրենսդրական լիազորությունները չեն կարող լիարժեքորեն ներկայացնել պառլամենտի այդպիսին լինելը առանց իր իսկ ընդունած օրենքների դրույթների կատարման օրինականությունը ստուգելու, գնահատելու, խախտումները հայտնաբերելու և պատասխանատվության միջոցների կիրառման ընթացակարգերը ներառող վերահսկողական լիազորությունների: Հետևապես իշխանության տարանջատման մեխանիզմում և պետական իշխանության մարմինների համակարգում օրենսդիր մարմնի տեղն ու դերը որոշվում է ոչ միայն նրա օրենսդրական լիազորություններով, այլ նաև գործադիր իշխանության նկատմամբ վերահսկողական գործառույթի իրականացման ծավալով և փաստացի հնարավորությամբ:

7. Սահմանադրությամբ ամրագրված պետական մարմինների միջև լիազորությունների տարանջատման սկզբունքն ինքնին դեռ չի նշանակում օրենսդիր մարմնի վերահսկողական լիազորությունների իրական, լիարժեք դրսևորում, քանի որ այդպիսին դառնալու համար անհրաժեշտ է նաև դրա իրավական ու քաղաքական արդյունավետության բաղադրիչը: Հետևաբար պառլամենտական վերահսկողության ինստիտուտը ցանկացած առանձին վերցրած երկրում կարող է իրապես դրսևորվել, գործադիր իշխանությանը օրինականության շրջանակներում պահող ռեալ գործոն դառնալ միայն իշխանությունների սահմանադրական այնպիսի տարանջատման դեպքում, որը միաժամանակ ապահովում է նաև պետության մեջ միասնական իշխանության երեք թևերի լիազորությունների իրական հավասարակշռում:

8. Երրորդ Հանրապետության սահմանադրության ընդունումից հետո ընկած տասնամյակում իշխանության թևերի առանցքում օրենսդիր մարմնի դերազդեցման գիտակցումը հանգեցրեց սահմանադրության 2005թ.-ի խմբագրության ընդունմանը, սակայն դրանից հետո ծավալված սահմանադրական զարգացումների ընթացքը ցույց տվեց, որ իշխանությունների տարանջատման ու հավասարակշռման մեխանիզմը երկրում չի աշխատում և մեծ հաշվով ՀՀ Նախագահի ու ՀՀ կառավարության դուալիզմով դրսևորվող գործադիր իշխանությունը դուրս է օրենսդիր մարմնի վերահսկողությունից: Դրա առերևույթ գիտակցումը հանգեցրեց իշխանությունների նախաձեռնած սահմանադրության թվով երկրորդ փոփոխությանը, որի հետևանքը եղավ կառավարման կիսանախագահական ձևից անցումը պառլամենտական ձևին:

9. Հայաստանի Հանրապետությունում ինչպես մինչև 2018թ. ապրիլի 9-ը գործող կառավարման կիսանախագահական ձևի ժամանակ, այնպես էլ դրանից հետո ձևավորված պառլամենտական կառավարման պայմաններում պետական իշխանության իրականացման տարանջատման սկզբունքի ամրագրմամբ հանդերձ պետական

մարմինների միջև լիազորությունների հավասար բաժանման առումով իրական հավասարակշռություն չի ապահովվում: Օրենսդիր մարմինն ի սկզբանե, անհավասար մեկնարկային պայմանների մեջ է դրված եղել կիսանախագահական կառավարման ժամանակ, քանի որ գործադիր իշխանությունն ակնհայտ գերակայություն ուներ օրենսդիր մարմնի նկատմամբ՝ նախագահի գերիզոր ու գրեթե անվերահսկելի լիազորություններ ընդգրկող ինստիտուտի շնորհիվ: Այսինքն պետական մեխանիզմում նախագահի ընդգծված դերակատարությամբ կիսանախագահական հանրապետության ֆրանսիական մոդելը իշխանությունների տարանջատման սկզբունքի ամրագրման պահից պետական իշխանությունը միայն երեք հայտնի թևերի միջև հավասար տեղաբաշխելու առումով ինքնին խնդրահարույց է: Իսկ պառլամենտական կառավարումը սահմանադրության նոր փոփոխությամբ մեր երկրում այնպիսի մեխանիզմներով է ամրագրվել, որ այժմ էլ գործադիր ամբողջ իշխանությունը փաստացի կենտրոնացվել է Հանրապետության վարչապետի ձեռքում, նախագահը վերածվել է արարողակարգային ֆիգուրի, ուժային կառույցների ղեկավարները նշանակվում են վարչապետի կամքով, ենթարկվում են նրան և դուրս են Ազգային ժողովի վերահսկողությունից: Այսինքն հիմա էլ երկրում ձևավորվել է գերվարչապետության կառավարման համակարգ, որը կիսանախագահականի ժամանակվա պետության գլխի նման լիազորությունների հավասարակշռության առումով դարձյալ մարտահրավեր է պետական մեխանիզմի համար:

10. Պետության մեխանիզմը կազմող բոլոր մարմիններն ըստ ՀՀ հիմնական օրենքի 4-րդ հոդվածի կարող են ունենալ միայն օրենսդիր, գործադիր և դատական իշխանություններին ներհատուկ լիազորություններ և հետևաբար ըստ այդ լիազորությունների ծավալի էլ կրել համապատասխան պատասխանատվություն՝ և՛ քաղաքական և՛ սահմանադրական: Այդպիսի պատասխանատվությունը կանխորոշված է պետական սովորեցության հանդեպ ժողովրդի սովորեցության գերակայությամբ և ըստ էության խոսքը գնում է իշխանության քաղաքական պատասխանատվության մասին նրա գործառույթներն իրականացնող մարմինների գործունեության համար՝ հատկապես գործադիր իշխանության գործունեության համար: Հետևապես ինչքան ծավալով մեծ են այդ իշխանությունը կրողի լիազորությունները, այդքան էլ մեծ պետք է լինի պատասխանատվությունը դրա իրականացման համար:

11. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի վերահսկողական գործունեության նորմատիվ իրավական կարգավորման հիմքերի վերլուծության և փաստացի ձևավորված պրակտիկայի արդյունքների հաշվառմամբ անհրաժեշտ է ըստ ամենայնի մեծացնել, ընդլայնել և ուժեղացնել գործադիր իշխանության նկատմամբ իրականացվող վերահսկողական լիազորությունները տարածելով դրանք նաև պետության գլխի, բոլոր տեսակի հատուկ ծառայությունների, ուժային կառույցների, կենտրոնական դրամատան նկատմամբ: Անհրաժեշտ է նաև սահմանադրական մակարդակով իշխանության թևերի միջև փոխհարաբերությունների այնպիսի խելամիտ ներդաշնակություն ապահովել՝ ճշգրտելով իշխանության յուրաքանչյուր թևի գործառնական, հակակշռող և զսպող լիազորությունների շրջանակները, որպեսզի ապահովվի դրանցից յուրաքանչյուրի հարաբերականորեն անկախ և ինքնուրույն գործունեությունը օրենքի գերակայության պայմաններում՝ կառավարման ոլորտում

հայտնաբերվող օրինախախտումների վերացման, գործադիր իշխանությունը հասարակության առջև լիարժեք հաշվետու և պատասխանատու դարձնելու նպատակով:

**Առենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի հետևյալ
գիտական հրապարակումներում**

1. Եղիշե Բագոյան Ի., ՀՀ սահմանադրական զարգացման առանձնահատկությունները, Երևան «Լրաբեր հասարակական գիտությունների» ՀՀ ԳԱԱ պարբերական, 2007 թիվ 3, էջ 3-18,
2. Եղիշե Բագոյան Ի. Պառլամենտական վերահսկողության ձևերն ու դասակարգման հիմքերը, «Օրինականություն» ՀՀ դատախազության գիտագործնական և ուսումնամեթոդական հանդես, 2013, թիվ 79, էջ 33-3,9,
3. Եղիշե Բագոյան Ի. Պառլամենտական վերահսկողության տեսակները, Երևան, «Օրինականություն» ՀՀ դատախազության գիտագործնական և ուսումնամեթոդական հանդես 2013, թիվ 77, էջ 33-40,
4. Եղիշե Բագոյան Ի. Պետական վերահսկողության ձևավորման պատմական փուլերը և պառլամենտական վերահսկողության ինստիտուտի ձևավորումը, Երևան, «Օրինականություն» ՀՀ դատախազության գիտագործնական և ուսումնամեթոդական հանդես 2014, թիվ 82, էջ 35-41,
5. Եղիշե Բագոյան Ի. Պառլամենտական վերահսկողության հասկացությունն ու բովանդակությունը, Երևան «Ակունք» գիտական հոդվածների ժողովածու ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ, 2014թ, թիվ 2(8) էջ 159-173,
6. Եղիշե Բագոյան Ի. Խորհրդարանական ընդդիմության գործունեության ինստիտուցիոնալ կարգավորման անհրաժեշտությունը, Երևան, «Օրինականություն» ՀՀ դատախազության գիտագործնական և ուսումնամեթոդական հանդես, 2022թ. հունվար-փետրվար, N127 էջ 48-56

БАЗОЯН ЕГИШЕ ИШХАНОВИЧ
СУЩНОСТЬ ПАРЛАМЕНТСКОГО КОНТРОЛЯ И СОВРЕМЕННЫЕ ПРОБЛЕМЫ В
РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ
РЕЗЮМЕ

Проблемы парламентского контроля возникли еще со времени создания этого органа, а в Республике Армения продолжают оставаться таковыми со времени провозглашения независимости и по сей день.

Тема диссертации посвящена современным проблемам обеспечения эффективного контроля со стороны Национального Собрания над деятельностью исполнительной власти в Республике Армения.

Цель диссертации заключается во всестороннем проанализировании сущности института парламентского контроля, его роли и значения в механизме реализации полномочий законодательного органа, а так же в решении научной задачи повышения результативности деятельности законодательного органа, осуществляющий парламентский контроль в РА, путем совершенствования как конституционно-правового поля, так и методического обеспечения и разработки механизма оценки качества, обеспечивающий эффективность контрольной деятельности этого органа.

В качестве объекта исследования были рассмотрены конституционно-правовые отношения возникающие между высшими органами государственной власти в связи с полномочиями осуществляемыми субъектами парламентского контроля в Республике Армения, а предметом исследования стала система конституционно-правовых норм, регулирующих деятельность парламентских механизмов и анализ юридической практики.

В работе были подвергнуты научно-практичному анализу возникновение, понятие, сущность, исторические формы, современные разновидности парламентского контроля, а так же взаимоотношения Национального собрания с исполнительной властью в лице президента и правительства. Автор проанализировал вопрос о том, сбалансирована ли концентрация такого объема государственных полномочий в руках правительства и премьер-министра Республики Армения после изменений конституции 2015 года с равнозначной политической ответственности премьер-министра предусмотренной конституцией.

В диссертации, в контексте изменений Конституции РА 2015 года, предметом анализа развития закономерностей и создание механизма эффективного парламентского контроля стали проблемы связанные с деятельностью Правительства РА с учетом факта, что при парламентской модели правления звения законодательной и исполнительной власти в действительности управляет одна и та же политическая сила. Это сделала предметом обсуждения такие вопросы, в отношении которых в теоретической литературе не были сформированы единые подходы, или вызвали новый научный интерес в результате конституционных изменений.

В диссертации указано, что еще при президентской форме управления до изменений конституции 2015 года, исполнительная власть в лице всеисильного президента не было подотчетно Национальному Собранию и по сути исполнительная власть была безконтрольна, а при парламентской форме управления, с учетом факта

управления одной и той же политической силой ветви законодательной и исполнительной власти, перед Республикой Армения встали новые призывы. В частности, в этой ситуации у законодательной власти нет мотивации реально контролировать исполнительную власть, сформированную им самим. Данная ситуация может привести к “формальности” парламентского контроля над исполнительной властью со стороны законодательной власти, что плохо скажется на функционировании государственного механизма в целом.

В условиях фактического управления одной и той же политической силой, в отношениях между двумя государственными органами, парламентом и правительством, когда отсутствует элемент диалектического закона единства противоположностей и борьбы, особенно актуальным ставится вопрос о принятии конституционного закона об оппозиционной деятельности, где должны будут прописаны понятие, принципы, субъекты оппозиционной деятельности, права и гарантии деятельности субъектов оппозиционной деятельности, а так же государственные органы, ответственные за гарантии оппозиционной деятельности.

В рамках диссертации предметом всестороннего анализа стали вышеуказанные проблемы и были предложены способы их решения.

На оснований результатов исследований, к защите представлены 10 предложений и авторских формулировок, сделано 11 заключений.

Сформулированные на основании результатов выполненных исследований положения и заключения призваны развивать теорию конституционного право Республики Армения, а полученные результаты могут использоваться будущими исследователями в процессе их научных исследований.

Основные положения и выводы диссертации отражены в научных публикациях автора.

YEGISHE I. BAZOYAN
THE ESSENCE OF PARLIAMENTARY CONTROL AND CONTEMPORARY
PROBLEMS IN THE REPUBLIC OF ARMENIA
SUMMARY

The problems of parliamentary control arose as early as the creation of this body, and in the Republic of Armenia they have continued to exist since the declaration of independence to this day.

The dissertation is devoted to the contemporary issues of ensuring effective control by the National Assembly over the activities of the executive branch in the Republic of Armenia.

The aim of the dissertation is to conduct a comprehensive analysis of the nature of the institution of parliamentary control, its role and significance within the mechanism of exercising the powers of the legislative body, as well as to address the scientific task of improving the effectiveness of the legislative body's activity in carrying out parliamentary control in the Republic of Armenia. This is to be achieved through the improvement of the constitutional and legal framework, methodological support, and the development of a quality assessment mechanism ensuring the efficiency of the supervisory activity of this body.

The object of the research includes the constitutional and legal relations arising between the highest state authorities in connection with the powers exercised by the subjects of parliamentary control in the Republic of Armenia. The subject of the research is the system of constitutional and legal norms regulating the activity of parliamentary mechanisms and the analysis of legal practice.

The work provides a scientific and practical analysis of the origin, concept, essence, historical forms, and modern types of parliamentary control, as well as the relationship between the National Assembly and the executive branch represented by the President and the Government. The author analyzed whether the concentration of such a volume of state powers in the hands of the Government and the Prime Minister of the Republic of Armenia after the 2015 constitutional amendments is balanced by the equivalent political responsibility of the Prime Minister as stipulated by the Constitution.

In the dissertation, within the context of the 2015 constitutional amendments of the Republic of Armenia, the issues related to the activities of the Government were examined as part of the analysis of the development of regularities and the creation of an effective parliamentary control mechanism. This was done considering the fact that under the parliamentary system of governance, both the legislative and executive branches are in practice led by the same political force. This raised for discussion questions for which there had previously been no unified approaches in theoretical literature or which had acquired renewed scholarly interest as a result of constitutional changes.

The dissertation notes that even under the presidential system of government, before the 2015 constitutional amendments, the executive branch represented by an all-powerful president was not accountable to the National Assembly and was therefore effectively beyond control. Under the parliamentary system, taking into account the fact that the legislative and executive branches are controlled by the same political force, new challenges have arisen before the Republic of Armenia. In particular, in this situation, the legislative body lacks motivation to

genuinely control the executive branch that it itself has formed. Such a situation may lead to the “formalization” of parliamentary control over the executive branch by the legislature, which would have a negative impact on the functioning of the state mechanism as a whole.

In conditions where both branches are effectively governed by the same political force, and where the dialectical element of unity and struggle of opposites between the two state bodies — the Parliament and the Government — is absent, the issue of adopting a constitutional law on opposition activity becomes especially relevant. Such a law should define the concept, principles, and subjects of opposition activity, the rights and guarantees of opposition actors, as well as the state bodies responsible for ensuring those guarantees.

Within the framework of the dissertation, the aforementioned issues have been comprehensively analyzed, and possible solutions have been proposed.

Based on the research results, 10 proposals and original formulations have been presented for defense, and 11 conclusions have been made. The provisions and conclusions formulated as a result of the research are intended to contribute to the development of the theory of constitutional law in the Republic of Armenia, and the results obtained may be used by future researchers in the course of their academic work.

The main theses and conclusions of the dissertation are reflected in the author’s scientific publications.

